

տակը բարակ ծակեր ունի . տակառին շրջապատն ալ վարէն վեր բարձրութե երրորդ կամ չորրորդ մասին վրայ չորս դիէն ծակ ծակ է : Բնդունարանին ծակ տիրը՝ ուսկից այն խառնուրդը կ'անցնի , ամենապզտիկ են , որոնց մէջ երբեմն վերի ծայրերնին հանգոյց ըրած թել կ'անցընեն : Իսկ կողին վրայի ծակերը՝ ուսկից որ ներս օդ կը մտնէ , կէս բութ տրամագիծ ունին : Տակառը բարկ քաղցախի մէջ թաթխած կաղամախի տաշեղով կը լեցընեն , և խառնուրդն ալ հարիւրամասն ջերմաչափին 24 կամ 28 աստիճան ջերմութե բարձրացընելով ընդունարանին մէջ կը լեցընեն : Եւ խառնուրդը կաթիլ կաթիլ այն մանր ծակտիքներէն վազելով տաշեղներէն կ'անցնի և տակառին ստորին կողմը հաղորդուած անօթի մը մէջ կը ժողովի : ()ըր որ կողերուն վրայի ծակերէն ներս կը մտնէ ներսի ալքողին հետ խառնուելով՝ ունեցած թթուածինը անոր կուտայ , և ինքը տակառին վերին կողմը հաստատուած ապակէ կամ փայտէ խողովակներէ դուրս կ'ելլէ : Իսկ ներքին բարեխառնութիւն ալքողին թթուածնի հետ միանալովը պատճառած ջերմութեամբը հարիւրամասն ջերմաչափին 38 կամ 40 աստիճանն կը հասնի . և այն հեղուկը իրեք չորս անգամ տակառին մէջ եղած տաշեղներէն անցնելով՝ բոլոր ունեցած ալքողը քաղցախի թթուութե կը փոխարկի : Բոլոր այս գործողութիւնը 24 կամ 36 ժամ կը տևէ :

Եւս կերպով ամէն ալքողեան հեղանիւթք , և մասնաւորապէս գինին ու սիդրը կրնան քաղցախ ըլլալ . բայց պէտք է միտ զնել որ թթուածինը կորսընցուցած օդը տակառին մէջ չմնայ :

Ուցենպախի գիւտով ելած քաղցախը այնչափ մաքուր է որ կարծես թէ թորած է . մէկալ ամէն քաղցախները որ գինիէ , գարեջրէ , սիդրէ , և այլն , կը շինուին՝ միշտ մէջերնին գործարանաւոր օտար նիւթեր ունին , որ զանազան ձև կ'առնուն , և քաղցախու աստիճան բարեխառնութեամբ կը սկսին մեծնալ ու

ամաններուն յատակը նստելով այն ճերմակ մաճուցիկ նիւթը կը գոյացունեն որուն քիչ մը առաջ քաղցախի մայր ըսինք : Իսկ ամանակ անցնելով քաղցախը անդադար կը լուծուի , քաղցախի թթութուութե կը թուի , նորանոր մաճուցիկ նիւթ կը գոյանայ , և օդ տեսնելով անթիւ մանր կենդանիներ կը ծնանին որ պարզ աչքով ալ կը տեսնուին . այս մանր կենդանիներն , որ քաղցախի որդի կ'ըսուին , մեռընելու համար՝ քաղցախը մինչև եռացման աստիճան պէտք է տաքընել , իսկ ասոնց մարմիններն հանելու համար՝ քաղցախը պէտք է մզել , բայց առաջ մէջը քիչ մը ածուխի փոշի խառնելու է որպէս զի խանձահամ հոտ չունենայ :

Քաղցախը աղէկ պահելու ամենէն պարզ և ապահով կերպն է շիշերու մէջ լեցունելով գոցած և ջրով լեցուն խալկինի մը մէջ դրած կէս ժամ եփել , միայն թէ խալկինին մէջի ջուրը պէտք է երկու իրեք բութ շիշերէն վեր ըլլայ . այսպէսով քաղցախը երկար ատեն կրնայ դիմանալ առանց պզտիկ փոփոխութեան մը :

Պէտք է գիտնալ որ քաղցախը մետաղէ ամաններու կամ թէ թրծած հողէ ամաններու մէջ պահելու չէ , հապա կամ ապակիէ ամաններու մէջ և կամ թէ յախճապակէ ամաններու մէջ պէտք է պահել :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Կաղպար :

ԿԱՊՊԱՐԸ վշաղից թուփ մըն է , որուն ոտները կըր են , քիչ մը կոր , ծայրերնին կորած և ու կանանչ ընծիւղներով . տերեւները կըրակ են և քիչ մը գառնահամ , ծաղիկը սպիտակ և բառաթերթ է , որ ճիւղերուն վրայ կը բացուին՝ բառաթերթ առէջիւք և սերմ

1 L. Capparis. Խ. Cappero. Գ. Căprier. ՏՃ. Քէրէրէ :

նափակօք . իսկ արմատը երկայն ու
հաստ է , որուն կեղևը դառնահամ ու
թեթև հոտ մ'ունի :



Փշալեց կապար :

Փշալեց կապարին ¹ տերևները կըր
են , ողորկ , քիչ մը մուտ , և կոթին
տակը երկու փուշ կայ . ասոր ալ ծա-
ղիկները ճերմակ են և անմիջապէս տե-
րևներուն արմատին վրայ կը բուսնին :
Ըյս բոյս շատ տեղ ինքն իրեն առաջ
կուգայ , և ասոր ստուղն ու դեռ ծաղիկ
չի բացած կոկոնը՝ աղջրոյ մէջ կը ձգեն
ու քացախով կ'ուտեն , որ աղէկ ախոր-
ժակ կը բանան :

- 1 Ծաղիկ : 2 Ծաղկին թերթը : 3 Բաժակը
- հանգերձ սերմնափակով : 4 Պտուղը հորիզոնա-
- կան դրբով կտրած : 5 Սերմը դադաթէն կտրած :
- 6 Անկատար պտուղը պատենէն հանած :
- 7 Լտ . C. spinosa. ըստ Լինն :

Կասիա ¹ :

ԿԱՍԻԱՆ շատ տեղ կը մշակուի և ա-
ւելի պարարտ ու խոնաւ երկիր կը սի-
րէ : Շիւղալից է և զորչակեղև , տե-
րևները թանձր , երկայնաձև և սրա-
ծայր , ծաղկըները հինգ թերթեան են
դեղնագոյն , որ կանթերուն ծայրը
փունջ փունջ կը բացուին :



Սբաթերե կասիա :

Ըյս բոյս շատ տեսակ կ'ըլլայ , հոս
գրածնիս սբաթերե կասիա ² ըսուածն է ,
որուն բունը երկուքէն ինչուան իրեք
ոտք կը բարձրանայ , շիտակ և ճիւղա-
լից . ծաղիկը դեղին , որ շատը մէկտեղ
հասկի պէս ճիւղին ծայրը կը բացուին .
պտուղը տափակ է , երկպատեան , և
կուտերը առանձին խորշերու մէջ են :

- 1 Լտ . Cassia. Գղ . Casse. ՏՃ . խըւարէճէ :
- 2 Լտ . C. acutifolia. ըստ Տրիտէ :